



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22.052

ՀԿ (Բ) ԿԿԿ ԿՈՒԼՏՊՐՈԳՍԵԿՏՈՐ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲՈՒՀԵՐԻ ԹԵՎ ՑԵԽՆԻԳ. ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՐ

33(071)

R-16

ՊԵՏԶՐԱՑ

1931

ՅԵՐԵՎԱՆ

29.08.2013

Հ. Կ. (Բ) Կ Կ Կ ԿՈՒԼՏՊՐՈԳՆԵԿՏՈՐ

15 JAN 2016

05 FEB 2007

33(07)

Բ - 16

un

ԳԱՂԱԲԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
Ծ Ր Ա Գ Ի Ր

ԲՈՒՀԵՐԻ ՅԵՎ ՏԵԽՆԻԿ. ԲՈՒՀԵՐԻ ՀԱՄԱՐ

1007
3353

1951

ՊԵՏԼՐՈՏ — ՈՒՍՄԱՆԿԱՆԵԿՏՈՐ

22-052

Պետերատի տպարան
Հրատարակ. № 1854
Գլավիտ 6853 p)
Պատվեր 5301
Տիրաժ 2500

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՅԵՐԿՏՈՂ

ԲՈՒՀ-երի և ՏԵԽՆ. ԲՈՒՀ-երի ֆազտնոստու-
քյան ծրագրի

Մինչև վերջին ժամանակներս քաղտնոստու-
թյան դերը, վորպես ավանդվելիք առարկայի,
տեխն. ԲՈՒՀ-երի ուսման պլաններում չափից
դուրս յերկրորդական ե յեղել: Բավական ե նշել,
վոր այդ առարկային ուսման պլաններում տրվում
եր ընդամենը 90 ժամ: Այդ ժամաթվերի մի մասն
ել դեռ հատկացվում եր Խորհրդային Տնտեսու-
թյան տեսության բաժնին, վոր հանդիսանում
եր քաղ. տնտեսության յեղրախակիչ մասը: Յեթե
ի նկատի առնենք նաև այն հանգամանքը, վոր
ամբողջ կուրսը մշակվում եր արագ տեմպերով՝
յերկու-յերեք ամսում ապա պարզ կլինի, վոր սո-
ցիալ քաղաքական ցիկլի այս հիմնական առարկա-
յի ավանդման կազմակերպման համար խիստ ան-
նպաստ վիճակ եր ստեղծվում:

Ներկա ուսման պլանը վերացնում ե այդ բա-
ցերն այն իմաստով, վոր, նախ՝ Խորհրդային
տնտեսության տեսությունն առանձնացվում ե
վորպես ինքնուրույն կուրս, յերկրորդ՝ քաղտն-

տեսութիւնը, բացի այդ, ստանում է լրացուցիչ
ժամեր (ընդամենը 120 ժամ) :

Բայց և այնպես հարկավոր է նշել, վոր չնա-
յած այս նոր, հնի հետ համեմատած հալելլալ,
բայց դարձյալ սահմանափակ ժամերով դժվար
կլինեն կազմել քաղտնտեսութեան լրիւ, սխտե-
մատիկ մի կուրս, վորն ի վիճակի լինեն ապահո-
ւելու դասավանդման տեսական համեմատաբար
բարձր մակարդակը :

Այս խիստ պատճառով ել սույն ծրագրի իրա-
կանացումը պահանջում է ամբողջ մանկավարժա-
կան պրոցեսի գործունեացումը (ուսանողները
ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն, կոն-
սուլտացիա, բրիդադային աշխատանքի մեթոդ,
և այլն) :

Գործը հեշտացնում է այն հանդամանքը, վոր
ուսանողներն արդեն բանֆակներում և տեխնի-
կումներում անցած են լինում քաղտնտեսութեան
տարրական կուրսը :

Այս ծրագրի հիմնական խնդիրն այն է, վոր
արմատական հեղաշրջում մտցնի քաղտնտեսու-
թեան դասավանդման մեջ : Ինչպես հայտնի յե,
դասավանդման հիմնական պակասութիւնները,
վորոնցից այդ առարկան դեռ մինչև ողջ էլ չի ա-
զատվել, հանդիսանում են՝ 1) Արատրակտի
կարգաւորութեան կոնկրետից, 2) Տրամադրանակա-

նի կարգաւորութիւնը պատմականից, 3) Արդիա-
կանութեան պրոբլեմներին վոչ լրիւ ուշադրու-
թիւն դարձնելը, 4) Դոգմատիկայի գերակշռու-
թիւնը քննադատութեան նկատմամբ :

Արատրակտի և կոնկրետի կապի բացակայու-
թեան, ինչպես և տրամաբանականի ու պատմա-
կանի կարգաւորութեան հետեւանքով ուսանողները
դժվարանում են կապել վերացական տեսական
գորութիւնները կոնկրետ իրականութեան պրո-
բլեմների հետ : Նույնքան և վնասակար է արդիա-
կանութեան խնդիրներին վոչ լրիւ ուշադրութիւն
նվերելը, վորն ամենից ցայտուն կերպով արտա-
հայտվում է իմպերիալիզմի թույլ ու մակերեսա-
յին դասավանդման մեջ : Ինչ վերաբերում է դոգ-
մատիկայի գերակշռութեանը քննադատութեան
հանդեպ, ապա դա արտահայտվում նրանով, վոր
համարյա չեն լուսարանվում բուժական և ու-
ֆորմիստական տեսութիւնները, վորի հետեւան-
քով և մարքսիստական քաղտնտեսութիւնը կորց-
նում է իրեն հատուկ քննադատական, պոլեմիկա-
կան և մարտնչող վոզին : Այս բոլորի հետեւանքն
այն էր լինում, վոր քաղտնտեսութեան ավան-
դումը չէր ընթանում կուսակցականութեան հա-
մար մոլոր պայքարի յողունդի տակ : Վոչ ծրա-
գրերում և վոչ առաջադրութիւններում չէր
հայտնաբերվում դասակարգային աջալրջութիւն-

ներ այդքան կարելիոր նշանակութիւն ունեցող տեսութեան ֆրոնտում :

Նոր ծրագիրն աշխատում է վերացնել հիշված թերութիւնները : Նա դասավանդումը տանում է այն ձեւով, վոր պայքարում է «մեխանիզմի» և «Ռուբինիզմի» դեմ, մերկացնում է բուրժուական և մանր բուրժուական տնտեսական տեսութիւնները, արմատախիլ է անում վնասարարական տեսութիւնները (չանովչինս և ին) : Ի վերջո նրա մեջ վորոշակի կերպով առաջ է քաշվում արդիականութեան հարցը :

Իմպերիալիզմի և հետպատերազմյան կապիտալիզմի պրոբլեմները դրված են լայն կերպով, և նրանց հատկացված դասաթամերի թիվով ևս (ժամանակի մոտ $\frac{1}{3}$ մասը) նրանք մեծ տեղ են դրաւում ծրագրի մեջ : Սխալ կլինե՞ր մտածել, թէ կարելի չէ սահմանափակվել իմպերիալիզմին հատկացրած դասաթամերի այս ավելացումով միայն :

Արդիականութեան հետ յեղած կապը պահանջում է, վոր դասավանդումն ուղղի ուսանողների ուշադրութիւնը դեպի կապիտալիստական շրջապատի անցուդարձը՝ դեպի պրոլետարիատի այժմեական դասակարգային պայքարի ընթացքն ու դարգացումը : Այս իսկ պատճառով դասավան-

դումը պիտի տարվի այնպիսի յեղանակով, վոր նույնիսկ այսպես կոչված կլասիկ կապիտալիզմի անալիզը տալու ժամանակ զգացվի, վոր մենք ապրում ենք իմպերիալիզմի շրջանում :

Կարելի չէ՞ անցնել աշխատավարձի մասին, առանց նրա ժամանակակից ձեւերը շոշափելու :

Անհրաժեշտ է՞ արդո՞ք հալեւյալ արժեքը անցնելիս, կանգ առնել կապիտալիստական ռացիոնալիզացիայի ելութեան պարզաբանման վրա : Ահա թէ ինչու այնպիսի պրոբլեմներ, ինչպես՝ բանվորական ուր, աշխատավարձ, հալեւյալ արժեք, կապիտալիստական կուտակման ընդհանուր որենքը, — տվյալ ծրագրում հաջեցված է արդիականութեան մոտ նյութերով : Միայն այս ձեւի դասավանդման հետեւնեքով քաղտնետեսութեան կուրսը կարող է մարտնչող բնութիւն ձեռք բերել և Կոմինտերնի ծրագրի համար լավ կոմենտարիա հանդիսանալ :

Արդիականութեան հետ ունեցած կապի մասին խոսելիս պետք է ի նկատի ունենալ, վոր կա յերկու տիպի արդիականութիւն՝ կապիտալիստական արդիականութիւն և խորհրդային արդիականութիւն :

Հարց է առաջ դալիս, ինչպե՞ս վարվել խորհրդային եկոնոմիկայի հետ և հարկավոր է քաղ-

անտեսութեան կուրսի մեջ մտցնել խորհրդ. եկո-
նոմիկայի խնդիրները, թե՞ վոչ: Անկասկած մեր
եկոնոմիկան, վոր ներկայացնում է արտադրական
հարաբերությունների նոր ձևով, պահանջում է
առանձնակի ուսումնասիրություն՝ իր հատուկ
կուրսով: Բայց այս չի նշանակում, վոր քաղտրն-
տեսությունը տեղ չպիտի տա խորհրդային եկո-
նոմիկայի հարցերին: Մենք գիտենք, վոր Մարքսը
սպրանքային տնտեսութեան առանձնահատուկ-
ություններն ավելի ցայտուն կերպով արտահայտ-
վելու նպատակով համեմատութեան համար հա-
ճախ վերցնում էր վոչ միայն նախակապիտալիս-
տական հասարակական ֆորմացիաները, այլև եկո-
մունիստական հասարակությունը:

Հետևելով այս որինակին՝ մենք ես քաղտրն-
տեսություն ուսումնասիրելիս պետք է շոշափենք
խորհրդային եկոնոմիկայի հարցերը և անալո-
գիայի կարգով հակադրենք այն՝ կապիտալիստա-
կան տնտեսութեան սխտեմին: Յեւ յեթե Մարքսն
իր ժամանակ դիմել է տարբեր ձևերի համեմա-
տութեան վոչ այնքան այն պատճառով, վոր տա
սպառա հասարակութեան տնտեսությունը, այլ այն
պատճառով, վոր դրա հետ միասին մտաւոր կեր-
պով հաղթահարի բուրժուական հասարակությու-
նը, և ավելի լավ նկարագրի կապիտալիզմի տ-

առանձնահատուկությունները, — ապա մեր ժամա-
նակ, յերբ կապիտալիստական տնտեսաձևն այլևս
քնդհանուր չէ, և յերբ յերկրագնդի ¹/₆ մասի վրա
սոցիալիզմ է կառուցվում — յերկու իրար թշնա-
մի, սկզբունքորեն տարբեր տնտեսաձևերի հա-
մեմատությունը ծայր աստիճան անհրաժեշտ է:

Ամբողջ հարցն այն է, թե ինչպես պետք է
կատարել այդ, ինչպիսի նյութ ընտրել, և տվյալ
դեպքում ինչ չափ պահպանել:

Ներկա ծրագիրն աշխատում է տալ այդ հար-
ցի լուծումը՝ տողորելով բոլոր թեմաները հա-
մապատասխան խորհրդային նյութերով: Հարկա-
վոր է միայն նկատի ունենալ, վոր հանձնարարելի
նյութի լոկ որիննտրի բնույթ ունի, վորովհետև
ծրագիրն իրեն նպատակ է դնում այս դեպքում
դասատուի միտքն ուղղել ինքնուրույն ստեղծա-
գործական աշխատանքի վրա:

Իրբև յեղրակացություն պետք է հիշել, վոր
ծրագրում ցույց տված բոլոր դրույթների իրակա-
նացման ժամանակ դասատուին վիճակված է հաղ-
թահարելու խոշոր դժվարություններ, վորոնք
լրիելու յեն համապատասխան ուսումնական դրա-
կանութեան բացակայությունից:

Ակներեմ է, վոր չի կարելի դասաւանդել՝
տարրական դասադրքերն իրբև գլխավոր ձևոնարկ
ողտադործելով, այլ պետք է հետևել հիմնադ-

բյուրներ ռգտագործմանը: Մարքս, Ենգելս,
Լենին, Ռոզա-Լյուքսեմբուրգ, Ստալինի ղեկու-
ցումները, Մոլոտովի ղեկուցումները, Կոմինտեր-
նի և Պրոֆինտերնի մատերիալները, «Բալչեվիկ»
և «Պրավդա» պարբերականները.—ահա թե վոր-
տեղից ուսանողները, քաղաքագիտության առաջա-
դրությունների վրա աչքստեսլիս, իրենց անհրա-
ժեշտ նյութը պետք է քաղեն: Միայն այս պայմա-
նով կապահովվի ինչպես դասավանդման տեսա-
կան բարձր աստիճանը, այնպես ել նրա ակտուա-
լացման անհրաժեշտ աստիճանը:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ՏԵԽՆ. յիվ գրուղ. ԲՈՒՀ-երի համար (120 ժ.)
Ն Ե Ր Ա ծ Ո Ւ Խ Յ Ո Ւ Ն (3 ժ.)

Բնությունն ու հասարակությունն իրենց
միասնության և տարբերության մեջ: Արտադրու-
թյունը վորպես հասարակական մարդու ակտիվ
ներգործության պրոցես բնության վրա: Մարք-
սիստական ուսմունք արտադրողական ուժերի և
արտադրական հարաբերությունների մասին: Ար-
տադրողական ուժերի հասարակական բնույթը:
Արտադրողական ուժերը տեխնիկայի հետ նույ-
նացնելու Բուխարինյան թեորիայի քննադատու-
թյունը: Արտադրության միջոցների և բանուժի
փոխադրեցության դիալեկտիկան: Հասկացողու-
թյուն արտադրական հարաբերությունների՝
վորպես արտադրողական ուժերի շարժման հասա-
րակական ձևի մասին: Հասարակության տնտե-
սական կառուցվածքը վորպես արտադրական հա-
րաբերությունների հանրագումար:

Արտադրողական ուժերի և արտադրական

հարաբերությունների փոխադրեցության դիտելի-
տիկան: Արտադրողական ուժերի վորոշիչ նշանա-
կությունն արտադրական հարաբերությունների
նկատմամբ: Արտադրական հարաբերությունների՝
վորպես արտադրողական ուժերի շարժման ձևի՝
ակտիվ դերը: Արտադրական հարաբերություն-
ները արտադրողական ուժերից անջատելու ան-
թույլատրելիությունը:

«Ռուբրինչինան» վորպես մարքսիզմի իդեա-
լիստական ազավաղումը: Արտադրական հարա-
բերությունների նշանակության նսեմացումը և
Նրանց ըստ ելության արտադրական ուժերի հետ
նույնացնելը՝ վորպես մեխանիստների հիմնական
սխալն այս հարցում:

Արտադրական ուժերի և արտադրական հարա-
բերությունների մենչևիկյան կոնցեպցիան: Տեխ-
նիկական հետամնացության հաղթահարման և մեր
սեփական ուժերով սոցիալիզմ կառուցելու ան-
հրնարինության արոցկիստական տեսության քն-
նադատությունը:

Կապիտալիզմի պատմության մեջ չտեսնված՝
մեր տնտեսական շինարարության տեմպերը, վոր-
պես հետևանք սոցիալիստական արտադրական
հարաբերությունների զարգացման:

Հասկացողության տարբեր տնտեսաձևերի և
նրանց փոխարինման մասին: Ապրանքա-կապի-

տալիստական հասարակության տնտեսական կա-
ռուցվածքի բնութագրերը: Աշխատանքի հասարա-
կական բաժանման սպեցիֆիկ բնույթը ապրան-
քային տնտեսության մեջ:

Քաղաքի բաժանումը գյուղից: Գյուղատնտե-
սությունն ու արդյունաբերությունը: Շուկայի և
փոխանակության դերը: Բուրժուական տնտեսու-
թյան անարխիան: Բուրժուական հասարակության
հիմնական դասակարգերն ու դասակարգային
պայքարը: Բուրժուական հասարակության զար-
գացումը վորպես արտադրության հասարակական
բնույթի և յուրացման մասնավոր բնույթի մեջ
յեղած հակասության զարգացումը: Իմպերիա-
լիզմն իբրև նեխման շրջան: Անցողիկ շրջանում,
հեղափոխական պրոլետարիատի ձեռքով արտա-
դրական ուժերի և արտադրական հարաբերու-
թյունների ակտիվ վերակառուցումը և ի՞նչ. Ս. Վ.
Մ. սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդամեն-
տի կառուցումը:

Քաղ. տնտեսությունը լայն իմաստով: Են-
գելսի և Լենինի՝ քաղտնտեսության սահմանումը
լայն իմաստով: Քաղտնտեսությունը «նեղ»
իմաստով վորպես վիրտություն, վոր ուսումնասի-
րում և ապրանքային կապիտալիստական տնտե-
սության արտադրական հարաբերությունները՝
նրանց ծագման, զարգացման և կործանման

պրոցեսում: Քաղաքատնտեսության Բուխարինյան
սահմանման քննադատութիւնը: Քաղաքատնտե-
սության առարկայի Հիւլֆերդինդ—Ռուբինյան հաս-
կացողութեան քննադատութիւնը: Քաղաքատնտե-
սության առարկայի Բողղանով—Ստեպանովյան
ըմբռնման ճիշտ հասկացողութեան կարեւորու-
թիւնը ԽՍՀՄ եկոնոմիկայի տեսութեան
մշակման համար: Քաղաքատնտեսութեան նշա-
նակութիւնը պրոլետարիատի զստակարգա-
յին պայքարի համար («Կապիտալիզմի սո-
ցիալիստական քննադատութիւնը» (ԵՆԳԵԼՍ):
Քաղաքատնտեսութեան նշանակութիւնը կոմին-
նիստի ստրատեգիայի և տակտիկայի խնդիրներն
ըմբռնելու համար: Լենինյան ետապր քաղաքա-
տնտեսութեան մեջ: Հեղափոխական տնտեսութեան
և գործնականի միասնութիւնը: Քաղաքա-տնտե-
սութեան դասակարգային-սոցիալական բնույթը:

1. ԹԵՄԱ. ԱՊՐԱՆԻ ՅԵՎ ԱՐԺԵՔ (12 ժամ)

Արտադրանքի վերածումն ապրանքի: Ապրան-
քըն իբրև բուրժուական հասարակութեան տնտե-
սական բջիջի մի ձև: Արտադրանքի ապրանքա-
յին ձևի մեջ սաղմնային ձևով գոյութիւն ունի
կապիտալիստական արտադրութեան յեղանակի
բոլոր հակասութիւնները: Ապրանքի ներքին հա-
կասութիւնը: Սպառողական և փոխանակային
արժեքներ ու նրանց փոխհարաբերութիւնը: Վո-

խանաճային արժեք և արժեք: ՄԱշխատանքը վո-
րպէս արժեքի հիմք: ՄԱշխատանքի յերկակի բնույ-
թն ապրանքային տնտեսութեան մեջ: Կոնկրետ և
արստրակտ աշխատանք: ՄԱրժեքի մեծութիւնն
ու հասարակականորեն անհրաժեշտ աշխատանքա-
յին ժամանակը: Աշխատանքի արտադրողականու-
թեան բնական և պատմական Փակտորները: Աշ-
խատանքի արտադրողականութիւնն, ինտենսի-
վութիւնը և ապրանքի արժեքի վրա ունեցած
նրանց ազդեցութիւնը: Հասարակ և վորակյալ
աշխատանք:

Արժեքն ու նրա ձևը: Ձևի և բովանդակու-
թեան միասնութիւնը: Արժեքի հասարակական և
եկվիվալենտային ձևերը՝ վորպէս արժեքի արտա-
հայտութեան յերկու բովեոներ: Ապրանքի ներքին
հակասութեան վերածվելն արտաքին հակասու-
թեան: Արժեքի ձևերի պատմական և տրամաբա-
նական զարգացումը: Արժեքի ձևերի զար-
գացումը իբրեւ ապրանքի ու փողի մեջ յեղած
հակասութիւնների հայտնաբերումը: Դին և ար-
ժեք: Արժեքը վորպէս «հալասարակչութեան ո-
րենքը» սահմանելու անճշտութիւնը: Արժեքն իբ-
րև ապրանքային տնտեսութեան շարժման որինք:

Արժեքը վորպէս պատմական և սոցիալական
կատեգորիա: Ապրանքային Փետիչիզմն ու նրա ե-
րութիւնը: Ապրանքի մեխանիստական և իդեա-

լիստական օղակադուսները քննադատութեանը : Մարքսի արժեքի տեսութեան ճշգրիտ մեկնարանութեան նշանակութեանը խորհրդային եկոնոմիկան հասկանալու համար :

2-րդ ԹԵՄԱ. ՓՈՂԻ ՆՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ
ՖՈՒՆԿՅՈՒՆՆԵՐԸ (6 ժամ)

Ապրանքային աշխարհի յերկիւնդկում ապրանքի և փողի : Փողի սոցիալական դերը : Աշխատանքային փողի ուտոպիայի քննադատութեանը : Արժեքի չափանիշն իբրև փողի հիմնական ֆունկցիան : Արժեքի չափանիշն ու դնի մասշտաբը : Փողը իբրև շրջանառութեան միջոց : Ապրանքաշրջանառութեան ֆորմուլան— Ա-Փ-Ա : Շրջանառութեան համար անհրաժեշտ փողի քանակը : Դրամը և արժեքի նշանը : Թղթադրամն ու նրա ծագումը փողի՝ վորպես շրջանառութեան միջոցի՝ ֆունկցիայից : Թղթադրամի վալյուտան վորպես ընկնող վալյուտա : Թղթադրամը և վոսկին : Փողի դերը վորպես վճարման միջոց : Վարկային վողմմութեան և բանկային տոմսեր : Փողը վորպես գանձ : Փողի դանադան ֆունկցիաներից ծնունդ առած իլյուզիաները : Փողը միջադպային շրջանառութեան մեջ : Փողի բնույթը իՍՆՄ-ում : Փողի անհրաժեշտութեանը տվյալ ետապում :

3-րդ ԹԵՄԱ. ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔ (14 ժամ)

Պարզ ապրանքային և կապիտալիստական արտադրութեան : Լեւինն ու Ստալինը պարզ ապրանքային տնտեսութեան ու կապիտալիզմի փոխարարեցութեան մասին : Աջերի և տրոցկիստների հակալենինյան հայացքներն այս հարցի մասին : Արտադրողին արտադրութեան միջոցներից բաժանելու պրոցեսը : Արտադրութեան կապիտալիստական յեղանակի նախադրյալները : Բանվոր դասակարգի և կապիտալիստների մեջ յեղած արտադրական հարաբերութեանների ելութեան, այդ հարաբերութեանների վարդապետն ու սրման պարզարանումը՝ վորպես քաղաքատնտեսութեան կարեւորագույն խնդիրը : «Հավելյալ արժեքի ուսմունքը Մարքսի տնտեսագիտական տեսութեան անկյունաքարն է հանդիսանում» : (Լենին) :

Կապիտալի շրջանառութեան ֆորմուլան : Կապիտալի շրջանառութեան ֆորմուլայի հակասութեանը : Արժեքի աճման անկարելիութեանը շրջանառութեան սլոցեսում և կապիտալիստական յեղամտի մասին յեղած քաղքենիական պատկերացումների քննադատութեանը : Բանվորական ուժը վորպես ապրանք : Բանվորական ուժն և աշխատանքը :

Բանուժի արժեքը վորոշող ֆակտորները : Հավելյալ արժեքի դադոնիքը : Կապիտալիստական

արտադրութեան պրոցեսը վորպես աշխատանքի պրոցեսս և արժեքի ու հաւելլալ արժեքի արտադրութեան պրոցես: Հաւելլալ արժեքը վորպես կապիտալիստական յեկամտի ընդհանուր ձև: Անհրաժեշտ և հաւելլալ աշխատանք: Շահագործման նորման: Կապիտալի բուրժուական սահմանման քննադատութիւնը: Կապիտալի մարքսիստական սահմանումը: Կապիտալի ստորաբաժանումը հիմնական և փոփոխական կապիտալների և այդ ստորաբաժանման իմաստը: Հաւելլալ արժեքի նորման և փոփոխական կապիտալը՝ վորպես հաւելլալ արժեքի դումարը վորոշող յեղակի Փակտորներ:

Կապիտալը և հաւելլալ արժեքը՝ վորպես պատմական կատեգորիաներ: Ճորտատիրական և ֆեոդալական շահագործումների բնույթը: Կապիտալիստական շահագործման բնույթը: Վարձու աշխատանքի— կապիտալիզմի սխտեմը՝ վորպես պրոլետարիատի ստրկութիւն: Մարքսը հաւելլալ արտադրանքի մասին սոցիալիզմի ժամանակ: Արտադրական հարաբերութիւնների նոր տիպը ԽՍՀՄ—սոցիալիստական սեկտորում: Բանվորական որվա ստորաբաժանման «ոնհրաժեշտ» և «հաւելլալ» բանվորական ժամանակի անկիրառելիութիւնը ԽՍՀՄ—ի սլաքմաններում:

Բացարձակ հաւելլալ արժեքը և պայքար բանվորական որվա համար: Բանվորական որվա հա-

մար մղվող պայքարի մեթոդները: Գործադուլն ու լուսաւորը: Պայքար բանվորական որվա համար, վորպես ընդհանուր դասակարգային պայքար: Տնտեսական պայքարի անցումը քաղաքականի: Բանվորական որվա համար մղվող պայքարը ներկայումս և ռեֆորմիստական արհմիութեան դաւաճանական տակտիկան: Բանվորական որվա յերկարացումը կապիտալիստական սխտեմում: Բանվորական որվա կրճատումը ԽՍՀՄ—ում:

Հասկացողութիւն հարաբերական հաւելլալ արժեքի մասին: Աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը ու բանվորական ուժի արժեքի իջնցումը: Աշխատանքի արտադրողականութեան տարբերութիւնը լրացուցիչ հաւելլալ արժեք տվող տարրեր ձևոնարկութիւններում: Հարաբերականը հաւելլալ արժեքի հետապնդումն իբրև տեխնիկական պրոգրեսի ստիմուլ: Արտադրողական ուժերի զարգացումը կապիտալի իշխանութեան ներքո: Կապիտալիստական տեխնիկայի բնութագրումը: Կապիտալիստական կոոպերացիան և նրա հակասական բնույթը: Մանուֆակտուրան և մենաշխատ բանվորը: Կոոպերացիայի ձեւերը և նրա կախվածութիւնը տեխնիքական մոմենտներից և տնտեսական կառուցվածքից: Աշխատանքի բաժանման և համագործակցութեան նոր ձևերի ստեղծումը կոլիտոններում և մե-

քեան արականորային կայաններում : Մեքենայական արտադրութիւնն : Կապիտալիստական հարաբերութիւնները դրած սահմանը տեխնիկական պրոգրեսի վրա : Արտադրողական ուժերի և արտադրական հարաբերութիւնները մեջ յեղած հակասութիւնները : Ֆարքիկան վորպես սոցիալ արտադրական կոմպլեքս : Կապիտալիստական ֆարքիկայի դեմքը, մասնավորապես ներկայիս ֆարքիկայի : «Ֆարգործկոմները» Գերմանիայում և նրանց իսկական դերը : «Չեռնարկութիւնները դեմոկրատիայի» տեսութիւն : Վորպես սոցիալ-ֆալստական տնտեսական դեմոկրատիայի տեսութիւն : Բազմապատկան դեմոկրատիայի տեսութիւն : ԽՍՀՄ-ում հարկադիր աշխատանքի լեզնդան : «Տեյլորիզմ» վորպես «քրտինք քամելու դիտական սիստեմ» (Լենին) : Արտադրող և ինտենսիվ աշխատանքը-հասկնլալ արժեքի վրա ունեցած իրենց ազդեցութիւն տեսակետից : Ժամանակակից կապիտալիստական ռացիոնալիզացիան և նրա սկզբունքային տարբերութիւնը սոցիալիստական ռացիոնալիզացիայից : Սոցիալ ֆոչիստները վորպես կապիտալիստական ռացիոնալիզացիայի անցկացնողներ : Աջերի և արոցկիտները աղաժաղված զնահատականը կապիտալիստական ռացիոնալիզացիայի մասին : «Կապիտալ», «բանութ», «ապրանք» և «հավելլալ արժեք» կատեգորիաների անկիրա-

Բանութի վերարտադրութիւն համայնացման պրոցեսի ուժեղացումը : Բանութի վերարտադրութիւն ծախսերի նվազեցումը անհատական յեկամուտի իրացումից վորքանով այն հետզհետե աւելի յե վորոշվում հասարակական արդյունքի ամբողջական բաշխումով : (Սոսլապահութիւն, սոցապահովագրման, սոցիալական ապահովութիւն բանվորի վորակը բարձրացնելու և տեխնիկային տիրապետելու համար արված պետական հատկացումների իրացման և այլն ծախսեր) : Աշխատավարձի ելութիւն, բանվոր զասակարգի կենսական մտկարդակի բարձրացման հարցերի մասին յեղած ներկուսակցական բոլոր ոպողիցիաների սխալների արմատը գտնվում է ԽՍՀՄ-ի արտադրական հարաբերութիւնների նոս սիստեմի թերազնահատման մեջ :

5 - ԴԻ ԹԵՄԱ. ՇԱՀՈՒՅԹԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԻՆԸ (8 Ժամ)

Արտադրութիւնը և կապիտալի չրջնառութիւնը : Նրանց միասնութիւնն ու տարբերութիւնը : Արտադրութիւն անհատումը չրջնառութիւնից Հիլֆերդինգի և Ռենների մոտ : Այդ հայացքների հակահեղափոխական ելութիւնը : Ռուբինի փոխանակային կոնցեպցիայի զննադատութիւնը : Կապիտալը վորպես շարժում : Կապիտալի չրջապտույտը : Արդյունաբերական կապի-

տալը, նրա փողային արտադրութեան և ապրանքային ձևերը: Կապիտալի պատույտը: Հիմնական և շրջանառութեան մեջ գտնվող կապիտալը:

Արտադրութեան ծախսերը և ապրանքի խեղանքանքը: Արտադրութեան ծախսերը իբրև միջոց քողարկելու կապիտալիստական շահագործման ելույթները: Շահույթը վորպես հավելյալ արժեքի փոխակերպված ձևը: Արտադրութեան ծախսերն ու նրանց բաղկացուցիչ մասերը: Հիմնական կապիտալի տնտեսումը: Կապիտալիստական տրեստեման մեթոդներն ու ներհակական բնույթը: Ինչով և տարբերվում բանվորների վերաբերմունքը դեպի մշտական կապիտալի տնտեսումը և Մ-ի մեջ և կապիտալիստական յերկրներում: Հավելյալ արժեքի նորմայի փոխակերպվելը շահույթի նորմայի: Շահույթի նորմայի վրա ազդող ֆակտորները: Շահույթի տարբեր նորմաները արտադրութեան տարբեր բնագավառներում: Կապիտալի արտահանումն պակաս շահույթաբեր բնագավառներից դեպի ավելի շահույթաբեր բնագավառները և մրցութեան շնորհիվ կապիտալի մեջ միջին նորմայի և միջին շահույթի առաջացումը: Հավելյալ արժեքի բաշխումն արդյունաբերող կապիտալիստների միջև: Արժեքի կերպարանափոխվելը արտադրութեան գնի: Արտադրութեան գինը վորպես արժեքի ձևափոխություն: Արժեքի

տեսութունը և արտադրութեան գնի տեսութեան միջև յեղած կարճեցյալ հակասությունը: Մրցութունն և շուկայի գները: Արտադրութեան անհատական և հասարակական գները: Լրացուցիչ շահույթը և նրա նշանակությունը վորպես կապիտալիզմի զարգացման խթանի: Միջին շահույթի մասին Մարքսի ուսմունքի ազդեցությունը Ռուսինի կողմից: Արտադրութեան գնի տեսութեան ազդեցությունը Ջոնսթոնի և Ռուսինի մոտ: Շահի նորմայի իջեցման տենդենցի որևէնքը: Այդ տենդենցին հակասող ֆակտորները: Շահույթի նորմայի իջեցման տենդենցի որևէնքը՝ վորպես կապիտալիստական արտադրութեան յեղանակի հակասություն և նրա (կապ. արդ. յեղան.) անցողիկ բնույթի արտահայտություն: «Շահույթի» բնույթը և Մ-ի սոցիալիստական ձեռնարկություններում: Արտադրութեան գնի և շահույթի միջին նորմայի կառնվորիաների անկիրառելիությունը և Մ-ի և կոնսմիկայում:

7-րդ. ԹԵՄԱ. ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՅԵՎ ՓՈԽՏՎԱԿԱՆ ՏՈՎՈՍԸ (8 Ժամ)

Առեվտրական կապիտալի դործունեության սահմանը: Առևտրական կապիտալի դերը: Կապիտալի շրջանառութեան արագացումը: Շրջանառութեան ծախսերի կրճատումը ապրանքի վաճառքի կոնցենտրացիայի հետևանքով: Շրջանա-

ռության համար անհրաժեշտ կապիտալի կրճատումը: Առևտրական շահույթի աղբյուրը: Հավելյալ արժեքի բաշխման մեխանիզմը արդյունաբերական և առևտրական կապիտալիստների միջև: Ծառայողների շահագործումը առևտրական կապիտալիզմի կողմից: Մանր ապրանքա-արտադրողի շահագործումն առևտրական կապիտալիզմի կողմից: Արտաքին առևտուրը և գաղութների շահագործումը: Խորհրդային առևտրի բնույթն ու նրա նշանակությունը տվյալ ետապում:

Փոխառվական կապիտալը և նրա առանձնահատկությունները: Փոխառվական կապիտալի և առևտրա-արդյունաբերական կապիտալի հարաբերությունը, յերբ վերջինս իր արտահայտությունը սոցիալի մեջ և գտնում: Տոկոսը վորպես հավելյալ արժեքի մի մասը: Տոկոսի մակարդակը և նրա բնորոշող ֆակտորները: Ձեռնարկ, յեկամուտ և տոկոս: Վարկը և նրա ելությունը: Վաճառականական և բանկային վարկեր: Վարկի սոցիալական դերը: Կապիտալի մասնավոր սեփականությունից բխող հակասության լուծումը վարկի ոժանդակությամբ և միևնույն ժամանակ կապիտալիզմի բոլոր հակասությունների սրումը վարկի շնորհիվ: Բանկերը, նրանց հիմնական ուղեբացիաները: Մարջանը և լեռնի բանկերի դերի մասին անցման շրջանում: Վարկի բնույթն ու դերը ԽՍՀՄ-ի մեջ: Վարկային ռեֆորմի ելությունը ԽՍՀՄ-ի մեջ:

8-րդ ԹԵՄԱ. ՌԵՆՏԱՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ (16 ժամ)

Կապիտալը և ռենտան: Լրացուցիչ շահույթը արդյունաբերության մեջ: Մշտական լրացուցիչ շահի առաջացման նախադրյալները կապիտալիստական հողադործության մեջ և նրա յուրացումը հողատերերի կողմից: Ամենավատ հողերի վրա կստարած արտադրության ծախսերը վորպես հասարակականորեն անհրաժեշտ ծախսեր: Շուկայի դնի միասնությունը: Դիֆերենցյալ ռենտան վորպես հավելյալ արժեքի մասը: Բերքատվության ռենտա և դրության ռենտա: Նվազող բերքատվության որենքը և նրա բուրժուական ելությունը: Բացարձակ ռենտա: Հողի մասնավոր սեփականությունը վորպես պայման բացարձակ հողային ռենտայի գոյություն: Նրա աղբյուրը: Բացարձակ ռենտան վորպես դին առաջացնող ֆակտոր: Հողի դինը: Հողը—ֆիկտիվ կապիտալ: Բացարձակ ռենտայի վոչնչացումը հողի նացիոնալիզացիայի ժամանակ: Կապիտալիզմի ժամանակ հողի աղղայնացման անկարելիության պատճառները և նրա հնարավորությունը ԽՍՀՄ-ում: Ռենտայի տեղեկանքները և չարժուժը: Հողային ռենտայի աղղեցությունը բանվոր դասակարգի դրության վատթարացման վրա: Ռենտան ու կապիտալը գյուղացիական մանր տնտեսության պայմաններ

րում: Արտադրութեան կոնցենտրացիան գյուղատնտեսութեան մեջ: Կապիտալիստական դարգացման որենքները կիրառելիութիւնը գյուղատնտեսութեան մեջ: Խոշոր ձեռնարկները ատակելութիւնը մանր գյուղական տնտեսութիւնները նկատմամբ: Կապիտալիզմի հիմնական նշանները գյուղատնտեսութեան մեջ: Այն՝ դատողութեան սխալը՝ ըստ վորի հողագործութեան մեջ կապիտալիզմի դարգացման աստիճանը պիտք է վորոշել միմիայն հողամասի մեծութեամբ: Խոշոր կապիտալիստական տնտեսութեան առկայութիւնը հողամասի թեւեալ և փոքրութեան, սակայն նրա ինտենսիվ մշակութեան պայմաններում: Գյուղական տնտեսութեան կոնցենտրացիայի պատկերը գլխավոր յերկրներում: Գյուղատնտեսութեան դարգացումն արգելակող պատճառները: Հողի մասնավոր սեփականատիրական ձեւը և ունեւոր վորպէս այդ յերեւելութիւն հիմնական պատճառը: Լենինը գյուղատնտեսութեան կապիտալիստական դարգացման յերկու ուղիների մասին: Մանր գյուղացիական տնտեսութեան արտադրման պրոցեսում նախակապիտալիստական հարաբերութիւնների քայքայումը և դասակարգային պայքարի փոխադրումը գյուղը՝ Բանվոր դասակարգի և գյուղացիութեան դաշինքի որչեզտիվ հիմունքի ստեղծումը: Պրոլետարիատի և գյուղացիութեան փոխհարաբերու-

թեան լենինյան քաղաքականութիւնը: Ագրարային հարցի լուծման բուրժուական փորձերը քննադատութիւնը: Սոցիալ-Քաղցիտական հողային ծրագիրը: Մարքսը, Ենգելսը և Լենինը մանր տնտեսութեան վերակառուցման ուղիների մասին պրոլետարիատի գիլտատուրայի ժամանակ: Գյուղական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը ԽՍՀՄ-ում: Նարոդնիկական ընտանեկան աշխատանքային տնտեսութիւնը, նրա հակահեղափոխական բուրժուական ընտաւլրատորական ելութիւնը:

ԳՐԴ ԹԵՄԱ. ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ (8 Ժամ)

Անհատական կապիտալի վերարտադրութիւնը և հասարակական կապիտալի վերարտադրութիւնը: Հասարակական արդիւնքի արժեքային և առարկայական տարրերը: Հասարակական արտադրութեան յերկու ստորաբաժանումները և ալդ ստորաբաժանման իմաստը: Հասարակ և ընդլայնված վերարտադրութեան մարքայան սխեմաները: Այս սխեմաների միջոցով ծանոթանալ թինչպէս է կապիտալիզմական տնտեսութիւնը մասնակարարում իրեն ստաւման միջոցներով և ինչպէս է իրացնում իր արտադրութիւնը: Հասարակ և ընդլայնված վերարտադրութեան համաչափութեան անհրաժեշտ պայմանները: Վերարտադրութեան

դրոցեաների և հասարակական կապիտալի շրջանառութեան հակասութիւնը: Վերարտադրութիւնը վարդէս կապիտալիստական հասարակութեան արտադրութեան և սպառման հակադրութիւնների միասնութիւնը: Մեխանիստական հասարակչութեան թեորիայի հակալենինյան բնույթը և վերարտադրութեան տեսութեան մեջ նրա կիրառման քննադատութիւնը: Այդ տեսութեան ապօրոգետիկ բնույթը: Այդ տեսութեան ինքնուրույն եկոնոմիկայի կիրառման հակահեղափոխական բնույթը:

Ճշնաթամերն ու նրանց պատճառները: Ճշնաթամերի հնարավորութիւնները, վոր թաղված են պարզ ապրանքային տնտեսութեան պայմաններում: Ճշնաթամերի անխուսափելիութիւնը, վոր բոլորում և արտադրութեան հասարակական բնույթի և յուրացման մասնավոր բնույթի մեջ յեղած հիմնական հակասութիւնից: Ճշնաթամը վորպէս կապիտալիստական արտադրութեան բոլոր հակասութիւնների սինթեզը և վորպէս հասարակական կապիտալի շարժման վերականգնման գործիք: Մեխանիստական այն կոնցեպցիայի քննադատութիւնը ըստ վորի ճշնաթամը կապիտալիստական սիստեմի համարադրութեան խախտումն է: Ճշնաթամի պրոցեսը: Ճշնաթամի վերացման պրոցեսը: Ճշնաթամերի պարբերականութեան պատճառները: Ազդարային կրիզիսներ և

նրանց սպեցիֆիկ հատկութիւնները: Արդյունաբերական և ազդարային ճշնաթամերն իրենց փոխազդեցութեան մեջ: Ճշնաթամերի սոցիալական հետեւանքները: Ժամանակակից համաշխարհային տնտեսական ճշնաթամի հակիրճ բնութագրումը:

ԽՍՀՄ-ում Ժողովրդական տնտեսութեան առանց ճշնաթամերի զարգանալու հնարավորութեան պատճառները: Մեր տնտեսական դժվարութիւնների բնույթը և նրանց հաղթահարման ուղիները:

10-ԲԴ ԹԵՄԱ. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԼԵՆԻՆՅԱՆ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (18 Ժամ)

Արդյունաբերական կապիտալիզմի ներքին հակասութիւնները ու զարգացման տենդենցները: Իմպերիալիզմը վորպէս կապիտալիզմի առանձին փուլ: Իմպերիալիզմը «վորպէս առհասարակ կապիտալիզմի հիմնական հակասութիւնների զարգացումն ու անմիջական շարունակութիւնը» (ԼԵՆԻՆ): Արտադրութեան կոնցեկտրացիայի պրոցեսի ուժեղացումը: Ակցիոներական կապիտալը: Շահամաս, ակցիաների կուրսը: Հիմնադրական շահույթը: Ակցիոներական կապիտալի մարքայան դնահատականը: Մոնոպոլիստական միավորումները: Նրանց ձևին ու գործունեութիւնը

արտադրութեան և շրջանառութեան շրջանակներում :

Մոնոպոլիաների իշխող դերը արտադրութեան կարևորագույն բնագավառներում : Մոնոպոլիայի զարգացման պրոցեսը վերջին ժամանակաշրջանում : Մոնոպոլիան իբրեւ վապիտալիստական հատուկ հակառությունների զարգացման բարձրագույն ձևի կրող : Մոնոպոլիան և մրցություն : Մրցումը ծնում և մոնոպոլիա : Մոնոպոլիան ծնում և ուժեղացնում և մրցումը : Մոնոպոլիային ուղեկցող մրցման ձևերը : Ընդ. Բուխարինի սխալը այս հարցում :

Բանկերի նոր դերը : Բանկերի դերաճումը միջնորդի համեստ դերից ամենակարող մոնոպոլիստների : Բանկերի կոնցենտրացման պրոցեսը և մոնոպոլիայի առաջացումը : Գերմանիայի, ՀԱՄՆ-ի և այլ բանկերի կոնցենտրացիայի տրվյալները : Բանկային մոնոպոլիաներ և նրանց դերը ժամանակակից տնտեսական ճգնաժամի մեջ : Բանկերի և արդյունաբերութեան միաձուլումը : Ֆինանսական կապիտալի առաջացումը : Ֆինանսական կապիտալի Հիլթեբրեդինգյան սխալ հասկացողությունը : Ֆինանսական ոլիգարխիա : Ֆինանսական տիրապետութեան ձևերը : Ֆինանսական կապիտալի տիրապետությունը : Ֆինանսական կապիտալի տիրապետությունը վորպես շահագործողների մի փոքրիկ խմբակի բռնութեան մի ձև

արդարձակչութեան խոշոր մեծամասնութեան վրա : Ֆինանսական կապիտալը և բուրժուական պետությունը : Բուխարինի պետական կապիտալիզմի մասին ունեցած սխալների ճննադատությունը :

Կապիտալի արտահանումը վորպես իմպերիալիզմի հիմնական նշաններից մեկը : Արտահանվող կապտալի պատճառներն ու աղբյուրները : Կապիտալի արտահանման ձևերը : Կապիտալի արտահանման դերն ու նշանակությունը : Կապիտալի արտահանման աղբյուրությունը ներմուծող և արտածող յերկրների վրա : Կապիտալի արտահանությունն ու կապիտալիստական երսպանսիան : Կապիտալների դերի յետպատերազմյան փոփոխությունը համաշխարհային շուկայում և ուժերի փոխհարաբերութեան մեջ իմպերիալիստական լազերում : Պայքար սպառման և հումքի շուկաների համար : Արտաքին շուկայի դերը իմպերիալիզմի դարաշրջանում : Պայքարի ձևվերը արտաքին առևտրի մեջ : Պրոտեկցիոնիզմը և դեմոլինդ : Առեվտրական քաղաքականությունը ԽՍՀՄ-ի նկատմամբ : Աշխարհի բաժանումը մեծ պետությունների մեջ : Գաղութային պրոբլեմը : Իմպերիալիզմի դադուլթային քաղաքականութեան ծագումը : Գաղութների նշանակությունը իմպերիալիստական պետությունների համար : Կիսադադութներ և յերկրների յենթարկվելը Ֆինանսա-

կան կապիտալին: Կապիտալիզմի անհամաչափ ու
բեկեքը և նրա սրումը իմպերիալիզմի ժամանակ:
Այս որենքի ձևակերպումը ընկ. Ստալինի կող-
մից: Այս որենքի տրոցկիստական աղավաղումը:
Իմպերիալիստական պետությունների միջև տե-
վական համաձայնության դալու անկարելիու-
թյան պատճառները: Պայքար աշխարհի վերաբա-
թանման համար: Միլիտարիզմը և մարլինիզմը:

Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի վեր-
ջին ետալը: Մակարուծությունն ու նեխումը
վորպես արտահայտություն արտադրողական ու-
ժերի և արտադրական հարաբերությունների միջև
յեղած հակասությունների սրման ամենարարձր
աստիճանի: Կապիտալիզի խորտակման պրորոկե-
մը: Իմպերիալիզմը վորպես պատերազմների և
պրոլետարական հեղափոխությունների ժամանա-
կաշրջան: Դասակարգային հակասությունների
աճումն ու դասակարգային պայքարի սրումը:
Սոցիալիստական հեղափոխությունն ու պրոլե-
տարիատի, դյուդացիության և դադութային
հնչված ժողովուրդների դերը նրանում:

Կապիտալիզմից սոցիալիզմ տանող անցողիկ
շրջանի անխուսափելիությունը: Կապիտալիզմի
տնտեսական զարգացման անհամաչափության ու-
րենքը և սոցիալիզմի հաղթանակի հնարավորու-
թյունը մի քանի և նույնիսկ մի յերկրում: Լենինը
և Ստալինը սոցիալիստական հաղթանակի մասին

ԽՍՀՄ-ում: ԽՍՀՄ-ի մեջ սոցիալիզմի հաղթանա-
կի անկարելիության տրոցկիստական տեսություն
մենչևիկյան ելությունը: Կաուցիական ուլտրա
իմպերիալիզմի տեսություն և Հիլֆերդինգի իմ-
պերիալիզմի քննադատությունը: Կադմակերպած
կապիտալիզմի սոցիալ-Ֆաշիստական տեսության
քննադատությունը: Բուխարինյան «կադմակերպ-
ված կապիտալիզմի» տեսությունը վորպես սո-
ցիալ-դեմոկրատական տեսության մի վարիանտը:

11-ԲԻ ԹԵՄԱ. ԿՍՊԵՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՃԳՆԱԺԱՄԸ. — (12 ժամ)

Յետ պատերազմյան կապիտալիզմի դարաշրջա-
նը վորպես կապիտալիստական սիստեմի ընդհա-
նուր ճգնաժամի դարաշրջան: 1914—15 թվական-
ների պատերազմը վորպես կապիտալիզմի ընդհա-
նուր ճգնաժամի սկիզբը: Պրոլետարիատի դիկտա-
տուրայի հաստատման փաստը ցամաքի ¹⁾ մասի
վրա— իբրեւ վիաստ, վոր կապիտալիստական
սիստեմը այլևս ընդհանուր չէ: Հակասությունը՝
կապիտալիստական յերկրների և ԽՍՀՄ-ի միջև
վորպես յերկու սկզբունքորեն հակառակ տնտե-
սական, քաղաքական ձևերի հակասություն: Կա-
պիտալիզմի բոլոր հակասությունների սրումն
ընդհանրապես և մոնոպոլիստական կապիտալի-
ստական զարգացման տենդենցների ավելի ցայտուն
հայտնաբերումը: Յետպատերազմյան կապիտա-

լիզմի զարգացման 3 շրջանները: 3-րդ շրջանի բնութագրումը: Կապիտալիզմի հետագա տնտեսական և տեխնիկական նեխումը: Արտադրողական ուժերի հետագա զարգացման և կապիտալիստական սոցիալ-տնտեսական կեղևի միջև սուր կերպով ուժեղացող անհամապատասխանությունը: Արտադրական լայն հնարավորություններն ու ձեռնարկությունների խրոնիկական թերաբեռնվածությունը կապիտալիստական յերկրներում: Արտադրության աճման տեմպերի խիստ անկումը, արտադրության մի շարք բնագավառների անընդհատ զեպրեսիվությունը, վերսկս տնտեսական սիստեմի նեխման արդյունք:

Արտադրողական ուժերի քայքայման աճումը («չտալլություն տրադեդիան»), կապիտալիզմի անկարողությունը յուրացնելու և դարգացնելու իր ներսում ծնունդ առած նոր տեխնիկան:

Կապիտալիստական սոցիոնալիզացիայի հետեւանքով առաջ յեկած բոլոր հակասությունների սրումը: Աշխատանքի ինտենսիվիզացիայի աճումը, բանվորական որվա յերկարացումը, ռեալ աշխատավարձի իջեցումը վերսկս բուրժուազիայի կողմից բանվոր դասակարգի վրա գործ դրած ճնշման ել ալելի ուժեղացման արտահայտություն: Բանվոր դասակարգի կյանքի պայմանների վատացումը: Փոփոխումն նրա կազմի մեջ: Կազմվածքային դործազրկությունը և դործա-

դուրհների միլիոնանոց բանակը: Բուրժուազիայի զիկտատուրայի ուժեղացումը և նրա տիրապետության ապարատի ֆաշիզացման պրոցեսը: Դասակարգային պայքարի սրումը: Պայքարի սրումը համաշխարհային շուկայում սպառման համար: Պրոտեկցիոնիզմը ու գեմպինգը զարգացման բարձր աստիճանի վրա: Գաղութային պրոբլեմը: Գաղութների և կիսագաղութների սոցիալ-տնտեսական զարգացումը: Տեղական կապիտալի աճումը հին գաղութային և կիսագաղութային յերկրներում և նրա պայքարը բանուժի «հայրենի» շահագործման և տեղական շուկայում ազդեցություն ձեռք բերելու համար: Ոտարերկրյա կապիտալի ազդային ասոցիացիայի տեսության ըննադատությունը՝ ապագաղութայնացման տեսություն մեջ: Գաղութային ազդային հեղափոխությունների պրոբլեմը: Սոցիալ ֆաշիստները ու գաղութային պրոբլեմը: 1929—30 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը. նրա զարգացումը կապիտալիզմի ճգնաժամի ընդհանուր բնույթի հիման վրա: Ժամանակակից ճղնաժամի առանձնահատկությունը: Կապիտալիստական դյուղական տնտեսությունը հատուկ հակասությունների խորացումը պատերազմից հետո: Ժամանակակից ազրարային կրիդիսը, նրա արտահայտության ձևերն ու նրա վերացնելու փորձերը: Ժամանակակից ազրարային ճգնաժա-

ձը վորպես կապիտալիստական ընդհանուր ճրջ-
նաժամի բաղկացուցիչ մասը: Ագրարային ճգնա-
ժամի սոցիալ-քաղաքական հետեանքները:

Պայքար աշխարհի նոր վերարածանման համար
և պատերազմի վտանգի աճումը յետ պատերազմ-
յան կապիտալիզմի մեջ: Հակասությունների և
ոսղմական ձեռնարկների աճումը: Պատերազմա-
կան հնարավոր կոնֆլիկտների հիմնական գծերը:
Կապիտալիստական աշխարհի կողմից պատերազմ-
ի պատրաստութիւնը ԽՍՀՄ-ի դեմ:

ԽՍՀՄ և կապիտալիստական աշխարհը: Յերկու
սիստեմի պայքարը: ԽՍՀՄ և նրա տնտեսական ու
քաղաքական նշանակութիւնը համաշխարհային
ճգնաժամի դարգացման, կապիտալիստական սիս-
տեմի խորտակման և համաշխարհային պրոլետա-
րական հեղափոխութեան արագացման համար:
Կապիտալիզմի ճակատագիրը բուրժուական տրն-
տեսագետների լուսաբանութեամբ: Աջ և «ձախ»
ոպորտունիստները համաշխարհային պրոլետա-
րական ուղիների և ետապների մասին: Պայքար
կոմինտերնի գլխավոր գծի պաշտպանութեան
ֆրոնտում:

12-րդ ԹԵՄԱ. ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՐԿԱՆ ՅԵՎ ՄԵԹՈԴԸ. — (12 ժամ)

Դիալեկտիկական մատերիալիզմը իբրեւ միակ
գիտական մեթոդ աշխարհը ճանաչելու և այն

փոփոխելու համար: Դիալեկտիկական մեթոդի
եյութիւնը ու նրա կիրառումը քաղաքա-տնտե-
սութեան բնագավառում: Հիստորիզմը քաղաքա-
տնտեսութեան մեջ: Քանակ և վորակ: Հակադրու-
թյունների միասնութեան որեւոր: Արատակ-
ցիայի նշանակութիւնը քաղաքատնտեսութեան ու-
րեւնքների ճանաչողութեան համար: Մարքսյան
արտոյակցիայի մատերիալիստական բնույթը:
Արարական ու կոնկրետը: Անցում արարակալից
դեպի կոնկրետը:

Պատմական մատերիալիզմը վորպես դիալեկ-
տիկական մեթոդ, կիրառելի յե հասարակական դի-
տութիւնների ասպարիղում: Պատմական մատե-
րիալիզմը վորպես քաղաքատնտեսութեան մեթոդ:
Հասարակութիւնն ու անհատը քաղաքատնտեսու-
թեան մեջ: Հասկացողութիւնն արտադրողական
ուժերի և արտադրական հարաբերութիւնների
մասին: Արտադրողական ուժերն և արտադրական
հարաբերութիւնները վորպես հակադրութիւննե-
րի միասնութիւն: Արտադրողական ուժերի վորո-
շիչ նշանակութիւնը: Արտադրական հարաբերու-
թիւնները վորպես արտադրական ուժերի շարժ-
ման ձև: Այդ ձևի ակտիւութիւնն ու հարաբերա-
կան ինքնութիւնութիւնը: Քաղաքատնտեսու-
թիւնն իբրեւ գիտութիւն, վոր ճոստմնասիրում
և ավյալ պատմականին վորոշ հասարակութեան

արտադրական հարաբերությունները նրանց ծաղման, զարգացման և անկման մեջ»։ (ԼԵՆԻՆ)։

Քաղաքատնտեսությունը նեղ իմաստով վորպես ապրանքա-կապիտալիստական տնտեսության արտադրական հարաբերությունների ուսումնասիրության դիտություն։ Քաղաքատնտեսության մեթոդի առանձնահատկությունը նեղ իմաստով, վորը բղխում է կապիտալիստական արտադրական հարաբերությունների ապրանքա-ֆեոդալիստական բնութից։ Մեխանիստական և իդեալիստական կոնցեպցիաները քաղաքատնտեսության մեջ։—

Ա) Մեխանիստական կոնցեպցիաների ըննադատությունը քաղաքատնտեսության մեջ։ Հասարակական ուրեքների վերածումը բնության ուրեքների։ Հավասարակշռության ենթադրյալ բաղանի տնտեսությունը։ Աշխատանքային մեխանիզմների որակները։ Արտադրական հարաբերությունների վերածումն անմիջականորեն արտադրողական ուժերի և վերջիններիս նույնացումը տեխնիկայի հետ։ Արտադրատ աշխատանքի՝ վորպես վոչ պատմական կատեգորիայի մեկնաբանումը։ Կապիտալիզմի զարգացմանը համընթաց արտադրական հարաբերությունների ապաֆեոդալիզացման հաստատումը։ Ձևի և բովանդակության նույնացումը։ Քաղաքատնտեսության չվիժումը տեխնոլոգիայի հետ և այլն։ Մեխանիստական կոնցեպցիաների

երի կապը աջ թեքման տեսական հիմնավորումների հետ։

Բ) Քաղաքատնտեսության մեջ իդեալիստական ռեվոլյուցիոնիզմի ըննադատությունը (Ռուբին)։ Սոցիալական հակադրությունը նյութականին և մասնավորապես արտադրատ աշխատանքի նյութականության խառնումը։ Ձևի անջատումը բովանդակությունից։ Արտադրական հարաբերությունների նույնացումներն առ ու ծախսի հարաբերությունների հետ։ Արտադրական հարաբերությունների դասակարգային բնույթի քողարկումը։ Արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի փոխադեպության սխալ պատկերացումը։ Ուսումնասիրության տրամաբանական ընթացքի անջատումը պատմականից և անալիտիկ մեթոդի հակադրությունը սինթետիկ մեթոդին։ Մարքսի մեթոդի սխալ բնութագրումը վորպես սոցիոլոգիական մեթոդի։ Ռուբինի կոնցեպցիայի կապը բուրժուական սոցիալական ուղղության և մենչեվիզմի հետ։ Պայքարի անհրաժեշտությունը յերկու Ֆրոնտում։

ՀՀ Ազգային գրադարան



NL0201784

94762-15 409. (1 л.)



**ПРОГРАММА ПОЛИТЭКОНОМИИ
ДЛЯ ВУЗОВ И ТЕХН. ВУЗОВ**

Госиздат ССР Армения
Эривань - 1981